

# Աղավնաձոր

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արամ Միքայելյան  
Հեռախոս (+374)93827468

Արենի համայնքի բնակավայր հանդիսացող Աղավնաձոր գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզկենտրոնից 14 կմ հյուսիս-արևմուտք, Աղավնաձորի սարահարթ կոչվող տարածքի հյուսիս-արևելքում՝ Արփա գետի Աղավնաձոր վտակից արևելք: Համայնքի վարչական տարածքը 4682 հա է՝ 466 հա վարելահողեր են, 1071 հա արոտավայր, 379.4 հա այգիներ:

Գյուղի հյուսիսային մասում իր գեղեցկությամբ աչքի է ընկնում Թեքսարի լեռնաճյուղերից Ուլգյուր գագաթը, որը ծովի մակերևույթից ունի 2690 մ բարձրություն: Գյուղի բարձրությունը ծովի մակարդակից 1450-1600 մ է, իսկ կենտոնական մասում ունի 1530մ բարձրություն:

Աղավնաձորի սարավանդն ունի հնագույն հրաբխային կառուցվածք և կտրտված է բազմաթիվ փոքրիկ գետակներով ու ձորակներով: Կլիման արտահայտված է մերձարևադարձային չոր կլիմային բնորոշ բնութագրով, այն է՝ չոր ու շոգ ամառներ և խոնավ, չափավոր ցուրտ ձմեռներ:

Տեղումների քանակը տատանվում է 350-400 մմ: Առավելագույն տեղումներ դիտվում է գարնանը՝ մայիս ամսին, որը խթանում է լեռնալանջերի ձյան հալոցքը և առաջացնում՝ սելավներ: Աշունը երկարատև է ու տաք, բարենպաստ՝ մրգերի հասունացման համար: Տեղանքին հատկապես լավ հարմարվել է «Արենի» տեսակի խաղողը:

Բազմաբնույթ կլիմայի պայմաններում ձևավորվել է յուրօրինակ բուսական և կենդանական աշխարհ: Բուսական աշխարհն աչքի է ընկնում դեղաբույսերով՝ ուղտափուշ, ուրց, գագ, մասուր, հազարատերևուկ, դանթափար, երիցուկ և այլն: Կենդանական աշխարհը հարուստ է թռչուններով՝ կաքավ, լոր, արծիվ, սողուններով՝ թունավոր օձեր՝ գյուրգա, իժ, ինչպես նաև գիշատիչներով՝ աղվես, գայլ, շնագայլ, արջ:

Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է, հիմնականում զբաղվում են պտղաբուծությամբ, խաղողագործությամբ: Արևային օրերը՝ արևափայլը, մինչև 340-350 օր է կազմում, որով էլ պայմանավորված է արտադրված գյուղատնտեսական ապրանքների՝ պտղատեսակների և բանջարեղենի բարձր որակը:

Խորհրդային տարիներին գյուղում եղել է կաթնապրանքային ֆերմա, նաև ոչխարաբուծական ֆերմաներ, ներկայումս էլ խնամվում են խոշոր և մանր եղջերավոր անասուններ: Գյուղում գործում են մի քանի ֆերմերային տնտեսություններ, որոնք զբաղվում են անասնապահությամբ, խաղողագործությամբ, ինչպես նաև մեղվաբուծությամբ:

Արտադրվում է գինի, օղի, չիր, պանիր, բուրդ, միս, մեղր և այլն: Գյուղում գործում է նաև խաղողի վերամշակման երկու ձեռնարկություն, որոնք արտադրում և արտահանում են «Լուսարև», «Գեղեճ», «Հարսնասար» տեսակի որակյալ գինիներ:

Գյուղի հիմնադրումը վերագրվում է 13-րդ դարի սկզբներին: Աղավնաձորը կոչվել է նաև Աղնաձոր, Այնագուր: Հին գյուղը գտնվելիս է եղել այժմյան գյուղի կենտրոնական հատվածում: Երկրորդ բնակեցումը եղել է 1828թ-ին:

Բնակչությունը ներգաղթել է ռուս-պարսկական պատերազմի տարիներին Պարսկաստանից, հիմնականում Խոյից, Սալմաստից, Վանից, Մակուից, Սասունից և Նախիջևանից:

Աղավնաձոր գյուղի շրջակայքում եղել են բնակավայրեր, դրանք են՝ Ապանան, որը գտնվում է գյուղից մոտ 4կմ հյուսիս արևելք, *Բաղջաջղը*՝ գյուղից մոտ 3կմ հյուսիս արևմուտք, *Ղզլաղը*, Միրաշը: Այդ տարածքներում գտնվել են կահ-կարասիներ, խաչքարեր: Գտնվել են նաև կարասային թաղումների շրջանի մնացորդներ (մ.թ.ա. II): Միջնադարում Աղավնաձորի տարածքում, Դվին–Պարտավ առևտրական ճանապարհի վրա, եղել է քարավանատուն:

Գյուղից մոտ 4կմ դեպի հյուսիս գտնվում է Ժամիդուզ կամ Ուլգյուր գյուղատեղին, որտեղ մինչև այժմ կանգուն են մնացել Աստվածածին եկեղեցու պատերը (վերանորոգվել է 2004թ.), որի շրջապատում կան մահարձան կանգուն խաչքարեր: Նրանցից մեկը պատկանում է Սարգիս Երեցին: Գյուղատեղիում կա երկու գերեզմանոց, որոնցից փոքրը վերագրվում է 10-14-րդ դարերին, իսկ մեծը՝ 15-18-րդ դարերին:

Ուլգյուր գյուղում է ծնվել միջնադարի մեծ մանրանկարիչ, ճարտարապետ, քանդակագործ Մումիկը: Նրա ձեռքի գործերն են Նորավանքի վանական համալիրը, Ուլգյուր լեռան ստորոտում գտնվող Սուրբ Աստվածածին, շատ այլ վանքեր ու մատուռներ: Գյուղատեղիի գերեզմանատանը պահպանվում է Մումիկի որդու՝ Ասկանդրի խաչքարը: Իսկ Աստվածածին եկեղեցու բակում գտնվել է Մումիկի մոր և քրոջ գերեզմանները: Գյուղի կենտրոնում գտնվում է սուրբ Մարիամ եկեղեցին, իսկ շրջակայքում բազմաթիվ խաչքարեր և մատուռներ:

Աղավնաձորից 4 կմ հյուսիս գտնվում է «Ներքին Ուլնոց» գյուղատեղին (XIII-XIV դարեր), «Վանքի ձոր» հնավայրը՝ Սբ. Աստվածածին եկեղեցիով (X-XI դարեր) և 1009 թ.-ի մահարձանով, 1 կմ արևելք՝ «Աղջկաբերդ»-ը (XIII դար), XI-XIV դարեր խաչքարեր, իսկ 4 կմ հյուսիս-արևմուտք՝ XIII-XIV դարերի իջևանատուն:

Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, արվեստի դպրոց, բուժկետ, մշակույթի տուն: Աղավնաձորն ունի զարգանալու մեծ հնարավորություններ, ինչը կարևոր է պատմամշակութային և էկոտուրիզմի զարգացման համար:

2002 թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Աղավնաձոր գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է ընդամենը 24 հուշարձան: